3767

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«18» 03 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0022-22

Ձեռնարկողը՝ ***«Մանիսա» ՍՊԸ***
ք. Կապան, Ձորք թաղ. շ. 1 ա

Գործունեությունը՝ ***Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Մանիսա» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ, Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0022-22

< 18 **>** 03 **2022թ.**

Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Մանիսա» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Մանիսա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք

Ներածական մաս. Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Մանիսա» տեղամասը գտնվում է Սյունիքի մարզի Կապան քաղաքի վարչական տարածքում, Ողջի գետի ողողահունում և զբաղեցնում է մոտ 0.537հա տարածք, 1012.4-1013.1մ բացարձակ բարձրությունների վրա:

Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները 2020թ. օգոստոսի 1-ի դրությամբ, հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021թվականի ապրիլի 12-ի թիվ 468-Ա հրամանով, հիմք ընդունելով նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 6-ի N18 փորձագիտական եզրակացությունը:

Մանիսա տեղամասի պաշարների հաշվարկը կատարված է հետախուզման սահմաններում, և օգտակար հաստվածքում ընդգրկված ավազները լիովին բավարարում են «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍՏ ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին, որոնք իրենց ճառագայթահիգիենիկ հատկություններով կարող են օգտագործվել շինարարության մեջ առանց սահմանափակումների:

Ընկերությունը ԱԿԳԽ հանքավայրի «Մանիսա» տեղամասի շահագործումը նախատեսում է իրականացնել բաց եղանակով: Հանքավայրի մշակումն իրականացվելու է առանց հորատապայթեցման աշխատանքների՝ մեկ աստիճանով:

Մանիսա տեղամասի սահմանները եզրագծվում են հետևյալ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով.

	X	Y
1	4344388.2	8614064,9
2	4344357.5	8614008,8
3	4344328.5	8613932,2
4	4344354.3	8613899,1
5	4344380.3	8613944,3
6	4344402.5	8614051,1

Սույն նախագծով նախատեսվում է՝

-օգտակար հանածոյի մարվող պաշարները կազմում են 272.0հազ.մ^3, ընդ որում ստատիկ՝ 13.6հազ.մ^3, դինամիկ վերականգնվող՝ 258.4հազ.մ^3,

-պաշարների վերականգնման գործակիցն ընդունված է 1 միավոր,

-օգտակար հանածոյի կորզվող պաշարները– 242.0հազ.մ^3, ընդ որում ստատիկ՝ 12100մ^3, դինամիկ վերականգնվող՝ 229.9հազ.մ^3 :

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ ավազակոպճային խառնուրդի զանգվածի ընդունել՝ 13.6 հազ.մ^3 մարվող պաշար, արդյունահանման ժամկետը 20 տարի:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

-ամենամեծ երկարությունը – 152մ,

-ամենամեծ լայնությունը – 45մ,

-ամենամեծ խորությունը – 3.0մ,

-օտարման տարածքը - 0.537հա,

Յուրաքանչյուր տարի սեզոնի սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները.

-բացահանքի հարավ-արևելյան մասից ջրահեռացման առվի կառուցում:

-օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ПБЖ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում:

Բացահանքի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներն են

-էքսկավատոր – Kat 320DL,

-բուլդոզեր - Т -170,

-ջրցան - Зил 42-14-12 КО-713-01,

բացահանքի աշխատողների թիվը 6 մարդ:

Ավազի արդյունահանումը կիրականացվի գետի ձախ ափին զուգահեռ 10-15մ լայնությամբ, գետից մեկուսացված խրամներով՝ թողնելով 10մ բնամաս գետի և խրամի միջև՝ խառնուրդի արդյունահանման ընթացքում գետի բնական հոսքի ռեժիմը չխաթարելու, գետի ջրերը հնարավոր պղտորումից զերծ պահելու նպատակով: Այնուհետև առանց միջնորմ թողնելու, խրամի ձախ պատից 10-15մ լայնությամբ հաջորդ զուգահեռ խրամով կուտակի երկարությամբ (գետի հոսանքին հակառակ ուղղությամբ) կարդյունահանվեն խառնուրդի պաշարների հաջորդ, ապա երրորդ զուգահեռ ժապավենները: Կուտակի ամբողջ տարածքով հումքի լրիվ, կամ մասնակի արդյունահանումից հետո գետի ջրերը վաղ գարնանը, նախքան ձնհալը, կուղղվեն դեպի բացահանքը, որտեղ գարնան վարարումների ընթացքում գետի բերվածքների կուտակման շնորհիվ մարված պաշարները կվերականգնվեն: Ավազակոպճային խառնուրդի

լրիվ օգտագործումը բացառում են թափոնաառաջացումը և դրանց համար լրացուցիչ տարածքների օտարման անհրաժեշտությունը:

Օգտակար հաստաշերտի արդյունահանման ժամանակ նախագծային կորուստները որոշված են ըստ 2 խմբերի.

- Ընդհանուր բացահանքային կորուստներն այն կորուստներն են, որոնք մնում են բացահանքի կողերի շեպերի բնամասերում: Հաշվարկված են 1133մ^3, կամ 8.33%:

-Շահագործողական կորուստները պայմանավորված են օգտակար հանածոն հիմնատակող կավային ապարների աղտոտումից զերծ պահելու համար բացահանքի հատակում մոտ 10սմ օգտակար հանածոյի շերտ թողնելու հետ, այդ կորուստները կազմում են մոտ 363մ^3 կամ 2.67%: Ընդամենը կորուստները կազմում են 1496մ^3 կամ 11.0%:

Քանի որ, օգտակար հաստաշերտն ունի համարյա հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն, հանքաշերտի բացումը կատարվում է բացահանքային դաշտի արևելյան մասից (ամենացածր նիշը) ընդլայնական կտրող խրամի անցումով:

Ջրահեռացման առվի կառուցում՝ 38մ երկարությամբ: Կտրող խրամի անցումը կատարվում է 1.0մ^3 շերեփի տարողությամբ հակառակ բահով սարքավորված – Kat 320DL մակնիշի էքսկավատորով: Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

ԱԿԽ-ի հանքավայրը գետաողողատային տիպի հանքավայր է և ներկայացված է ավազակոպճագլաքարային ապարների ժամանակակից հունային նստվածքներով: Օգտակար կուտակը ծածկող ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները բացահանքում կազմում են 1450մ^3, ինչը բուլդոզերով հեռացվում է և փռվում է բացահանքի հարավային կողմում թողնված ափապաշպան բնամասի վրա:

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները կատարվում է դեպի ներքև շերեփման եղանակով, 1.0մ^3 շերեփի տարողությամբ Kat 320DL մակնիշի էքսկավատորով: Օժանդակ աշխատանքների համար էքսկավատորի հետ ընդունվում է նաև 1 հատ Т-170 մակնիշի բուլդոզեր: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղին)՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ: Շերեփման խորությունը էքսկավատորի ծայրային անցման դեպքում կազմում է 10.0մ, որը լիովին բավարարում է օգտակար հաստաշերտը մեկ աստիճանով մշակելու համար:

Արդյունահանված ավազի տեղափոխումը կատարվում է սպառողի ավտոինքնաթափի միջոցով: Մակաբացման ապարները բացահանքում կազմում են 1450մ^3, ինչը բուլդոզերով հեռացվում և փռվում է բացահանքի հարավային մասում թողնված ափապաշպան գոտու վրա:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, մոտեցող ավտոճանապարհը ջրելու համար անհրաժեշտ տեխնիկական ջուր մատակարարելու համար: Խմելու ջուր բերվում է ШН-БЦБ -1.4 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը բերվում է ջրցան ավտոմեքենայով:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Քանի որ հանքավայրի պաշարները վերականգնվող են, հանքավայրի շահագործումից հետո բացահանքի խախտված տարածքները կվերականգնվեն ինքնուրույն, գետի

վարարումների ժամանակ: Նախատեսվում է արտադրական հրապարակի՝ 250մ², աշխատաքնային հրապարակի՝ 390մ² և ավտոճանապարհի 500մ² մակերեսների հարթեցում: Հարթեցման ընդհանուր մակերեսը կկազմի՝ 1140մ²: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր մակերեսը կազմում է 0.114հա: Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերականգնման /հարթեցման/ համար նախատեսվում է 220.0հազ. դրամ:

Հայցվող տարածքի նախնական դաշտային ուսումնասիրության ժամանակ ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, ինչպես նաև դրանց աճելա և ապրելավայրեր չեն հայտնաբերվել:

Բուն հանքերևակման տարածքը, ըստ գնահատման հաշվետվության ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Նախատեսվող տարածքում 10-15կմ շառավղով որևէ բնության հուշարձան չկա, իսկ պատմամշակութային գրանցված կոթողներից գտնվում է նվազագույնը 1.2կմ հեռավորության վրա:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 120 հազ.դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 247.319հազ. դրամ:
Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերականգնման /հարթեցման/ համար նախատեսված է 220.0հազ. դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօդյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
-հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
-տեխնիկատրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված հարթակներում,
-արտանետվող նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում մեխանիզմների վրա,
-փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
-կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
-օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման, կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
-հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
-կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, համաձայնեցնելով համայնքապետարանի հետ,

-կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
-նախատեսվում են կենսաբազմազանության՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:
Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի տարածքում ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
-լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
-օգտագործված մեքենայական յուղերով, քսայուղերով և այլ աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
-գետի ափերի և ջրերի որակի մոնիտորին
Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
-Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

-Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
-Քանի որ գարնանային վարարաջրերի ժամանակ կարող է առաջանալ էկոլոգիական աղետներ, ապա ամեն տարի սեզոնի սկզբում, մինչ արդյունահանման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է կատարել բերվածքներից գետահուների մաքրում:
- Անհրաժեշտ է դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ արևմտյան մասից -38մ երկարությամբ (170մ^3), թեքությունը 5%:
-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
-Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մանիսա» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի «Մանիսա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մեսրոպյան

Ընդամենը՝ 6 էջ